ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47 , էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<22>> փետրվար 2012 թվականի N 6

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ N 51 ՈՐՈՇՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 2-ի << Արարատի մանկապատանեական ստեղծագործական կենտրոն>> բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին N 51 որոշման N 4 հավելված-ում հաշվապահի 0.5 դրույքը փոխարինել 1/մեկ/ դրույքով, խմբավարների 8 հաստիքային միավորները փոխարինել խմբավարների 12 հաստիքային միավորներով /փոփոխված հավելվածը՝ N 1 կցվում է/:

ԿՈՂՄ (9)

Ավագանու անդամներ՝

1. ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
2. ԱՐԱՋԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
4. ՅՈՒՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
6. ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱՂՅԱՆ
8. ՌՈԲԵՐՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
9. ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<22>> փետրվար 2012 թվականի N 7-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ, 34-րդ հոդվածի 1-ին կետերի պահանջներով ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի հոդվածներում կատարել ներքոհիշյալ փոփոխությունները

1. Պակասեցնել՝

1/ համայնքային բյուջեի <<Անասնաբուժական ծառայություն>> ծրագիրը 600.0 հազ. դրամ, սահմանելով համայնքային բյուջեի ընդհանուր եկամտային պլանը 398363.2 հազ. դրամ

2/ համայնքային բյուջեի 0421.51 <<Գյուղատնտեսություն >> ծրագրի 4241 <<Մասնագիտական ծառայություններ>> հոդվածը 600.0 հազ. դրամ:

Սահմանել համայնքային բյուջեի ընդհանուր ծախսային պլանը 398363.2 հազ. դրամ: Սահմանել պետության կողմից համայնքներին տրվող պատվիրակված լիազորությունների ծախսային պլանը 8993.7 հազ. դրամ:

2. Պակասեցնել՝

1/ համայնքային բյուջեի 0661.51 <<Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ>> ծրագրի

ա/ 4822 <<Այլ հարկեր >> հոդվածը 50.0 հազ. դրամ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 650.0 հազ. դրամ

բ/ 4251 << Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում >> հոդվածը 23.0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 1557.0 հազ. դրամ:

3. Ավելացնել 0661.51 <<Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ >> ծրագրի

1/ 4823 <<Պարտադիր վճարներ>> հոդվածը 63.0 հազ. դրամ

2/ 4215 <<Ապահովագրական ծախսեր >> հոդվածը 10.0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 130.0 հազ. դրամ:

4. Պակասեցնել 0451.51 <<Ճանապարհային տրանսպորտ >> ծրագրի

5134 <<Նախագծանախահաշվային ծախսեր >> հոդվածը 250.0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 2400.0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 83960.7 հազ. դրամ :

5. Ավելացնել 0111.51 <<Կառավարման ապարատի պահպանում >> ծրագրի 5122 <<Գույք և վարչական սարքավորումներ >> հոդվածը 250.0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 350.0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 47750.0 հազ. դրամ:

6. Համայնքային բյուջեի 1112.51 <<Հիմնական դասերին չդասվող պահուստային ֆոնդ>> ծրագրի 4891 <<Պահուստային ֆոնդ >> հոդվածից 170.0 հազ. դրամ ուղղել 0951.51 <<Արտադպրոցական դաստիարակության>> ծրագրի 4131 <<Սոց վճարներ>> հոդվածին սահմանելով հոդվածի ծախսային պլանը 1300.0 հազ. դրամ, իսկ <<ՄՊՄԿ>> ԲՀ-ի նախահաշվի ծախսային պլանը՝ 5835.0 հազ. դրամ:
7. Սահմանել հպմայնքային բյուջեի պահուստային ֆոնդը 3258.4 հազ. դրամ:
8. Համայնքային բյուջեի XXV –րդ կետի 0443.51 <<Շինարարություն>> վերնագիրը շարադրել՝ 0661.54 <<Բազմաբնակարան շենքերի բարեկարգում>>, այնուհետև ինչպես տեքստում:
9. Քաղաքապետին՝ կազմել նոր նախահաշիվներ:

ԿՈՂՄ (9)

Ավագանու անդամներ՝

1. ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
2. ԱՐԱՋԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
4. ՅՈՒՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
6. ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
8. ՌՈԲԵՐՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
9. ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<22>> փետրվար 2012 թվականի N 8

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 59 ՇԵՆՔ ԲՆԱԿԱՐԱՆ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՇԱՎԱՐՇ ԱՐՄԵՆԱԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ և 32-րդ հոդվածի 12, 13 կետերով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կատարել պետական գրանցում վերոհիշյալ հասցեի բնակարանի նկատմամբ, որպես Արարատի քաղաքային համայնքի սեփականություն՝ առանձին գույքային միավոր:
2. Ք. Արարատ Շահումյան փ. 59 շենքի բնակարան 15 հասցեն կրող բնակարանը նվիրել այդ բնակարանում 1991թ-ից բնակվող Շավարշ Արմենակի Թորոսյանին:

ԿՈՂՄ (9)

Ավագանու անդամներ՝

1. ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
2. ԱՐԱՋԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
4. ՅՈՒՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
6. ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
8. ՌՈԲԵՐՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
9. ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ